

ԳՈՐԾԱԴԻՐ

ՎՍՏԱՆՈՒԹՅԱՆ ՔՎԵ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆԸ

(Սկզբը՝ 4-րդ էջում)

Միխեիլ Գիորգաձե - մշակույթի, հուշարձանների պաշտպանության նախարար. 47 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, Եվրոպական մեծ ջրագիրը:



1983-92 թվականներին Վրաստանի ջրագնդակի ազգային հավաքականի, հորհրդային Միության հավաքականի անդամ էր: Եղել է Վրաստանի նախարարների կաբինետի տնտեսական դեպարտամենտի պետական խորհրդական, արտաքին տնտեսական հարցերով կոմիտեի, միջազգային տնտեսական կազմակերպությունների դեպարտամենտի պետ: Ջբաղվել է գործարարությամբ: Աշխատել է ոչ կառավարական մի շարք կազմակերպություններում: Տիրապետում է անգլերենին, ռուսերենին:

Գիորգի Մղերիշվիլի - ներքին գործերի նախարար. 46 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Աշխատում է գործունեությունը սկսել է ԵՊ նախարարության համակարգում: Տարբեր ժամանակներում եղել է քննիչ, ֆինանսների նախարարության ֆինանսական հետաքննիչ, եկամուտների նախարարության միջազգային օդանավակայանի մաքսային վերահսկողության բաժնի պետ, դեպարտամենտի պետ, ապա՝ ԵՊ նախարարության պետական անվտանգության գործակալության գլխավոր վարչության պետի տեղակալ: 2013-2014 թվականներին նշանակվել է Քվեմո Բարթիլի նահանգապետ: 2014-2015 թվականներին եղել է պատիժների կատարման եւ պրոբացիայի նախարար, իսկ 2015 թվականի օգոստոսից՝ ներքին գործերի նախարար: Տիրապետում է անգլերենին, ռուսերենին:



Լեւան Իգորիա - պաշտպանության նախարար. 42 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, Գերմանիայի, Գերոգ-Ավգուստի անվան պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրան, դոկտորանտուրան:



2004-2006 թվականներին ԵՊ նախարարության ակադեմիայի ռեկտորն էր: Ապա եղել է Վրաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի դեկան: 2012-2015 թվականներին եղել է Վրաստանի ԵՊ փոխնախարար, 2015-2016 թվականներին՝ Վրաստանի պետական անվտանգության ծառայության պետի տեղակալ: 2016 թվականից Վրաստանի պաշտպանության նախարարն է:

Կախա Կախիաշվիլի - պատիժների կատարման եւ պրոբացիայի նախարար. 64 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Աշխատում է գործունեությունը սկսել է ԵՊ նախարարության համակարգում: Տարբեր ժամանակներում եղել է քննիչ, ֆինանսների նախարարության ֆինանսական հետաքննիչ, եկամուտների նախարարության միջազգային օդանավակայանի մաքսային վերահսկողության բաժնի պետ, դեպարտամենտի պետ, ապա՝ ԵՊ նախարարության պետական անվտանգության գործակալության գլխավոր վարչության պետի տեղակալ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավաբանական բաժնի պետ: Աշխատել է նաեւ ոչ կառավարական կազմակերպություններում: 2012 թվականից Վրաստանի հակակոռուպցիոն խորհրդի անդամ է: 2014-2015 թվականներին եղել է պատիժների կատարման եւ պրոբացիայի փոխնախարար, ապա՝ նախարար: Տիրապետում է անգլերենին, ռուսերենին:



Գիգլա Ագուլաշվիլի - բնապահպանության եւ բնական ռեսուրսների նախարար. 52 տարեկան, ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Աշխատում է գործունեությունը սկսել է որպես քննիչ: Աշխատել է գլխավոր դատախազության աշխատակազմում որպես քննիչ, քննչական աշխատակազմի պետի տեղակալ, Կախեթի երկրամասային դատախազ, Թբիլիսիի Դիդուբե-Չուդուբեթի շրջանի դատախազ, արդարադատության նախարարության պատիժների կատարման դեպարտամենտի պետ, հիմնադրամների գրանցման դեպարտամենտի պետ: 2005-2012 թվականներին եղել է Հանրապետական կուսակցության գործադիր քարտուղար: 2012-2016 թվականներին՝ խորհրդարանի անդամ, ագրարային հարցերով կոմիտեի նախագահ, իսկ մայիսից՝ բնապահպանության նախարար: Տիրապետում է ռուսերենին:



Քեթևան Ցիխելաշվիլի - հաշտեցման եւ քաղաքացիական իրավապաշտպանության հարցերով պետ-նախարար. 1989 թ. ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: Ավարտել է Եվրոպայի կենտրոնական եւ Իռլանդիայի Լիմերիկի համալսարանները: Աշխատում է միջազգային կազմակերպություններում, եղել է Վրաստանի ԱԳ նախարարությունում վարչության պետի տեղակալ, ապա՝ Թբիլիսիում գործող միջազգային կազմակերպություններում: 2012-2016 թվականներին հաշտեցման եւ քաղաքացիական իրավապաշտպանության պետ-նախարարի տեղակալ էր, 2016 թվականից՝ պետնախարար: Տիրապետում է անգլերենին, ռուսերենին:



ԿԱՆԳԵՆՉՎԵՅԻՆ ԶՈՐՍ ԴԱՏԱՍՎՈՐՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոյեմբերի 29-ին խորհրդարանի ընթացակարգային հարցերի կոմիտեն քննարկեց չորս պատգամավորների լիազորությունների վաղաժամկետ կանգնեցման հարցը:

Խոսքը խորհրդարանական ընտրությունների արդյունքներով պատգամավոր ընտրված Գիորգի Կվիրիկաշվիլու, Կախի Կալաձեի, Գիորգի Գախարիայի ու Սանդրա Ռուլովսի լիազորությունների մասին է: Առաջին երեքի լիազորությունների դադարեցման հիմքն այն է, որ նրանք պաշտոններ են զբաղեցնում գործադիր իշխանությունում, ինչը չի համապատասխանում խորհրդարանական պատգամավորությանը: Ինչ վերաբերում է Սանդրա Ռուլովսին, ապա, նա իր ցանկությամբ հրաժարվեց իններորդ գումարման խորհրդարանի պատգամավորությունից:

«Վրացական երազանք» ընտրացուցակով Գիորգի Կվիրիկաշվիլուն, Կախի Կալաձեին եւ Գիորգի Գախարիային Վրաստանի խորհրդարանում կփոխարինեն Գուգուլի Մադրաձեն, Դավիթ Մատիկաշվիլին եւ Գիորգի Խատիձեն, իսկ «Միասնական ազգային շարժման» ցուցակով, Սանդրա Ռուլովսի փոխարեն, պատգամավորական մանդատը կտրվի Գիորգի Գվինիաշվիլուն:

ԴԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝ 20 ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ


Որակավորված սուբյեկտի կարգավիճակից օգտվող, պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների թիվը 11-ից հասցվել է 20-ի:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Թամար Ժվանիայի հրամանագրով, պետական բյուջեից ֆինանսավորում կստանան հետևյալ կուսակցությունները. «Պահպանողական կուսակցություն»՝ տարեկան ֆինանսավորումը կկազմի 236 572, «Արդյունաբերողներ»՝ 536 572, «Հանրապետական կուսակցություն»՝ 236 572, «Ազգային ֆորում»՝ 236 572, «Քրիստոնեա-պահպանողական կուսակցություն»՝ 598 698, «Վրացական երազանք»՝ 2 082 238, «Ազատ ժողովրդավարներ»՝ 512 196, «Լեյբորիստական կուսակցություն»՝ 472 812, «Միասնական ազգային շարժում»՝ 1 122 526, «Եվրոպական Վրաստան»՝ 895 726, «Ժողովրդավարական շարժում» միասնական Վրաստան»՝ 214 625, «Միացյալ ժողովրդավարական շարժում»՝ 997 037, «Վրաստանի հայրենասերների ալյանս»՝ 744 008, «Վրաց ավանդապահների միություն»՝ 87 024, «Ազատ Վրաստան»՝ 87 024, «Ազատություն»՝ 214 049, Գամսախուրդիայի ուղին»՝ 87 024, «Վրաստանի ուժային վետերանների ու հայրենասերների քաղաքական միավորում»՝ 87 024, «Նոր քրիստոնեա-ժողովրդավարներ»՝ 87 024, «Պետությունը՝ ժողովրդի համար» շարժումը՝ 195 511, «Նոր Վրաստան»՝ 195 511 լարի: Ընդհանուր առմամբ, բոլոր 20 կուսակցությունները կստանան 9 736 296 լարի:



ՄԵՐ ԱՆՍՈՒԱՆԱԼԻ ԲԱՐԵԿԱՍԸ

«ԳԻԶՈՆ ԾՐԱԳՐԵՐ ՈՒՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՕՊԵՐԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ՀԵՏ»



Համարել Գիգոյի մահվան մասին տեղեկացա «Վրաստան» թերթի էլեկտրոնային կայքից եւ որոշեցի ուղղարկել ձեզ իմ փոքրիկ այս նյութը:

Ինձ հարազատները... Գիգո ժողովրդահան իրականացրել է բեմադրություններ Ռուսթավելու, Մարջանիշվիլու, ինչպես նաեւ Փալիաշվիլու անվան օպերայի եւ բալետի պետական թատրոններում: Թե՛ Վրաստանում եւ թե՛ արտերկրում Գիգո ժողովրդահան իրականացրել է ինչպես վրաց կոմպոզիտորների համաշխարհային հնչեղություն ունեցող օպերաներն ու պիեսները, այնպես էլ՝ օպերային արվեստի համաշխարհային գրականության ընտիր նմուշները: 2011 թվականին Հայաստանի մշակույթի նախարարության եւ մեր օպերայի ու բալետի թատրոնի հրավերով, որի տնօրենն էի, Երեւան ժամանեց Գայոգ ժողովրդահան բեմադրելու Ալեքսանդր Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերան: Ստեղծագործական անձնակազմը սիրով ու ոգեւորությամբ ընդունեց մեր ժա-

մանակների վրաց թատրոնի նշանավոր ռեժիսորին: Ամիջապես սկսվեցին բեմադրական աշխատանքները: Նա ներկայացրեց ազգային օպերայի բեմադրման իր պատկերացումներն ու մեկնաբանությունը, ստեղծագործական իր չափանիշը, ուր տեսանելի էին Սայաթ-Նովայի սիրո հրճվածքն ու ողբերգությունը, նրա ցասումն ու ըմբոստացումը: Բայց առողջական վիճակը թույլ չտվեց նրան ավարտի հասցնել բեմադրական աշխատանքները: Իսկ մինչ այդ, իմ տնօրեն եղած տարիներին քանիցս փոխադարձ այցելություններ են եղել մեր թատրոնների միջեւ, փորձի փոխանակում եւ այլն: Հաճախ էի կապվում Գիգոյի հետ ու մշտապես լսում նույն արտահայտությունը հայերեն, որին լավ տիրապետում էր, չէ՞ որ իրեն հավաքեցի էր համարում. «Կամո ջան, մենք դեռ ինչե՛ր ենք անելու...»:

Շատ սիրեցիմք պայծառ մարդուն եւ փայլուն արվեստագետին, ում բարեկամներն են եղել Վարդան Աճեմյանը, Սուրեն Քոչարյանը, Նար Հովհաննիսյանը, Տաթևիկ Սազանդարյանը, Տիգրան Լեւոնյանը, Բաբկեն Ներսիսյանը: Հատկապես Գոհար Գասպարյան երեւոյթի պաշտամունքն ունեւր: Ափսոս... Մեծ վշտով իմացանք մեր մեծ բարեկամի, մեծամուն գեղագետի մահվան լուրը: Վրաց բարեկամ ժողովրդի հետ սզուն են նաեւ հայ արվեստասերները: Մեր խորին խոնարհումն ու լուսեղեն խնկարկումը՝ Մեծ Վարպետի հիշատակին:



ԿԱՍՈ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ



ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ԶՅԿ ՆԱԽԱԳԱՐ

Երեւանում անցկացվեց Հայաստանի հանրապետական կուսակցության 16-րդ համագումարը:



Կառավարող կուսակցությունն իր համագումարում անդրադարձավ երկրի արտաքին եւ ներքին քաղաքականության առաջնահերթություններին: Նախանշվեցին կոնկրետ քայլեր Հայոց ցեղասպանության ճանաչման, Արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման, Հայաստանի տնտեսական աճի ապահովման, բնակչության սոցիալական պայմանների բարելավման, Հայաստանի սահմանադրության անցումային դրույթների կյանքի կոչելու ուղղությամբ:

Սերժ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց Հայաստանի խոշորագույն քաղաքական կառույցի` ԶԿ նախագահի պաշտոնում իրեն վերընտրելու կապակցությամբ: Նա նշեց, որ «բավական պատասխանատու ժամանակահատված ենք մտնում եւ անելիքներ շատ ունենք» ընդգծելով, որ, միեւնոյն ժամանակ, ունեն կուռ թիւ եւ տարիների հարուստ փորձ:

Հաստատվեցին նաեւ կուսակցության նախագահի, վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները, կանոնադրությունում եւ ծրագրում կատարված փոփոխությունների ու լրացումների նախագծերը:

Համագումարում քննարկվեցին նաեւ կազմակերպչական հարցեր: Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը նախագահեց Սերժ Սարգսյանի ԶԿ նախագահության անցկացվեց խորհրդակցություն` նվիրված Հայաստանի մակրոտնտեսական զարգացումներին եւ 2017թ. պետական բյուջեի ծրագրային ցուցանիշներին:

Սերժ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց Հայաստանի խոշորագույն քաղաքական կառույցի` ԶԿ նախագահի պաշտոնում իրեն վերընտրելու կապակցությամբ: Նա նշեց, որ «բավական պատասխանատու ժամանակահատված ենք մտնում եւ անելիքներ շատ ունենք» ընդգծելով, որ, միեւնոյն ժամանակ, ունեն կուռ թիւ եւ տարիների հարուստ փորձ:

Հաստատվեցին նաեւ կուսակցության նախագահի, վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները, կանոնադրությունում եւ ծրագրում կատարված փոփոխությունների ու լրացումների նախագծերը:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ



Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի նախագահությամբ անցկացվեց խորհրդակցություն` նվիրված Հայաստանի մակրոտնտեսական զարգացումներին եւ 2017թ. պետական բյուջեի ծրագրային ցուցանիշներին:

Հայաստանի ֆինանսների նախարար Վարդան Արամյանը ներկայացրեց 2016թ. տարեկան սպասողական եւ մակրոտնտեսական ցուցանիշները, պետական բյուջեի հոսքերը, այդ թվում` բյուջե-տային մուտքերի եւ ծախսե-

րի սպասողական ցուցանիշները, ծրագրված ցուցանիշներից շեղումները, դրանց բացատրությունները: Ֆինանսների նախարարը ներկայացրեց նաեւ 2017թ. պետական բյուջեի ծրագրի նախագիծն այս փուլում, ռիսկերը, դրանց կառավարման հնարավոր սցենարները, ինչպես նաեւ տեղեկատվություն ներկայացրեց 2017թ.

կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանը, Հայաստանի ֆինանսների նախարար Վարդան Արամյանը, պաշտոնական այլ անձինք:

Սերժ Սարգսյանը խորհրդակցության մասնակիցների ուշադրությունը հրավիրեց տնտեսական աճի խթանմանը, բյուջեի կատարողականի ռիսկերի նվազեցմանն ուղղված որոշակի հարցերի վրա, սովել համապատասխան հանձնարարականներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐ ԶԵՆՈՒՄՍԱԶՐՈՒՅՅԸ ԱՄՆ ՆՈՐԵՏՏԻՐ ՓՈԽՆԱԽԱԳԱՐ ԶԵՏ

Դեկտեմբերի մեկին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ նորընտրյալ փոխնախագահ Մայք Փենսի հետ: Հեռախոսազրույցը կայացել է ամերիկյան կողմի նախաձեռնությամբ:

Սերժ Սարգսյանը եւս մեկ անգամ շնորհավորել է նորընտրյալ նախագահ Դոնալդ Թրամփին եւ նրա թիմին` ընտրություններում տարած հաղթանակի կապակցությամբ` մաղթելով հաջողություններ պատասխանատու առաքելության իրականացման հարցում:

Ջրույակիցները երկուստեք ընդգծել են, որ ԱՄՆ նոր վարչակազմի օրոք հայ-ամերիկյան համագործակցության արդի բարձր մակարդակը` ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական բնագավառներում ոչ միայն կպահպանվի, այլև նոր լիցք կստանա: Անդրադարձ է եղել նաեւ փոխադարձ հեղափոխություններ կայացնող օրակարգային հարցերին, այդ թվում` տարածաշրջանային խնդիրներին եւ մարտահրավերներին:

ՊԵՏԵՅՈՒՄԵՆ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ Ե ԱՐԺՆԱՅԵԼ

Դեկտեմբերի 1-ին, Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ, կայացավ կառավարության հերթական նիստը:

Նախքան օրակարգային հարցերի քննարկումը ՀՀ վարչապետը մի շարք հանցնարարականներ է սովել:

Գործադիրը հավանություն է տվել ՀՀ 2017թ. պետբյուջեի նախագծի ցուցանիշներում փոփոխություններին եւ ՀՀ Աժ մշտական հանցնաժողովներում եւ լիազույցմար նիստում պետբյուջեի նախագծի քննարկման արդյունքներով Աժ մշտական հանցնաժողովների, պարզամավորական խմբերի, խմբակցությունների եւ անհատ պարզամավորների կողմից Հայաստանի կառավարություն ներկայացված առաջարկությունների եւ եզրակացությունների ամփոփաթեթին: Պետբյուջեի նախագծի լրամշակված տարբերակը կներկայացվի ՀՀ վարչապետի կառավարության աշխատակազմ, որից հետո սահմանված կարգով Ազգային ժողով:

ՊՈԼՍԱԶՍԵ ՆԿԱՐԳԻ ԾՈՒՅԱԶՆԵԳՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ «Առնո Բաբաջանյան» համերգասրահի նախարահում նոյեմբերի 24-ին տեղի է ունեցել ժամանակակից պոլսահայ լուսանկարիչ Նուրան Աքբայաջի «Հայերը Թուրքիայում» լուսանկարների ցուցահանդեսի բացման արարողությունը եւ «Հայերը» պարկերագրի շնորհանդեսը:

ՊՈԼՍԱԶՍԵ ՆԿԱՐԳԻ ԾՈՒՅԱԶՆԵԳՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պոլսում հայկական արժեքների պահպանության գործում ներդրած ջանքերի համար նախարար Հրանուշ Հակոբյանը Նուրան Աքբայաջին պարգևատրեց ՀՀ սփյուռքի նախարարության պարվորով: Նախարարության պարվորների արժանացան նաեւ միջոցառման կազմակերպիչները` պոլսահայ լրագրող Սեւան Աթաօղլուն եւ Առաջին հիփոթեթային ընկերության ղեկավար Դավիթ Աթանեսյանը:

ՏԱՐԱԳՐԱՄ ՓՈԽՆԱԽԱԳՄԱՆ ԿՈՒՐՍԸ (2 դեկտեմբերի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետքայլ կուրսը.

ՏԱՐԱԳՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	479,30	482,50
ԵՎՐՈ	510	516,50
ՌՈՒՔԼԻ	7,44	7,65

ՄՏՈՐԱԳՐՎԵՅ ՄԻՎՈՐՎԱԾ ԶՈՐԱԽՄԲԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Նոյեմբերի 30-ին Հայաստանի եւ Ռուսաստանի ռազմական գերատեսչությունները ստորագրեցին երկու երկրների միավորված զորախմբի մասին համաձայնագիրը: Փաստաթուղթն ստորագրեցին Հայաստանի պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը եւ ՌԴ ռազմական գերատեսչության ղեկավար բանակի գեներալ Սերգեյ Շոյգուն:

զության մյուս մարտահրավերներին ու սպառնալիքներին»:

Ինչպես նշեց Վիգեն Սարգսյանը` զորախումբը կներառի Հայաստանի տարածքում տեղակայված 102-րդ ռուսական ռազմակայանը եւ Հայաստանի զինված ուժերի ստորաբաժանումները:

Երկու երկրների պաշտպանության նախարարներն ստորագրեցին նաեւ 2017 թվականի համագործակցության պլանը:

Նշենք, որ ավելի վաղ` նոյեմբերի 14-ին, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հավանություն էր տվել եւ համձայնարել էր Հայաստանի հետ ստորագրել հավաքական անվտանգության կովկասյան

տարածաշրջանում երկու երկրների միավորված զորախմբի մասին համաձայնագրի նախագիծը, որը «համարժեք հակազդում կապահովի զինված հարձակմանը, ինչպես նաեւ կողմերի անվտանգ

ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ, ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

Հայաստանում բնակչության թվաքանակը 2016 թվականի ինն ամսում, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է մոտ 10 հազարով:

ՀՀ դրամ:

Միեւնոյն ժամանակ, միջին ամսական անվանական սպառողական ծախսերը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով կազմել են 42 հազար 867 ՀՀ դրամ: 2015 թվականին, 2014 թվականի համեմատ, ցուցանիշն աճել է 5.1%-ով: Ծախսերի մեջ առավելագույն ավելացել են ծառայությունների (10.7%-ով), ոչ պարենային ապրանքների (8.5%-ով) մասնաբաժինները:

Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2016 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ` Հայաստանի բնակչությունը կազմում է 2 միլիոն 993 հազար 900 մարդ: Ինն ամսվա միջակայքում բնակչության բնական հավելաճը կազմել է 9.4 հազար, իսկ միգրացիայի գնահատման ցուցանիշը կազմել է 14 հազար 100:

Նախորդ տարվա համեմատ, Հայաստանում ծնելիության թիվը նույնպես նվազել է` 2,3 տոկոսով: Սակայն ունենք նաեւ մահվան դեպքերի նվազում` 2,5 տոկոսով:

Այս տարի նվազել է նաեւ անուսնությունների թիվը` 7,9

Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2015-ին արյան շրջանառության համակարգի հիվանդությունների պատճառով մահացության ամենաբարձր ցուցանիշը թեւ

նախորդ տարվա համեմատ նվազել է, սակայն այն դեռեւս պատճառ է դարձել 12 հազար 817 մարդու մահվան: Մահացության պատճառների շարքում երկրորդ ամենաբարձր ցուցանիշն ունեն չա-

ՄԱԶԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐՔՈՒՄ ԱՐՅԱՆ ՀՐԶԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԽԱՆՎԱՐՈՒՄՆԵՐՆ ԵՆ ՈՒ ԶԱՐՈՐԱԿ ՆՈՐԱԳՈՅԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում մահացության պատճառների ցանկը գրեթե մնում է անփոփոխ. արյան շրջանառության խանգարումները, չարորակ նորագոյացությունները, շնչառական, էնդոկրին համակարգի հիվանդությունները շարունակում են մնալ մահացության ամենահիմնական պատճառները:

րորակ նորագոյացությունները` 6069 մարդ, որը, նախորդ տարվա համեմատ, ավելացել է 384-ով, ապա` շնչառական օրգանների հիվանդությունները` 2126 մարդ նախորդ տարվա համեմատ ավելացել է 264-ով: Էնդոկրին համակարգի հիվանդություններից մահացել է 1323 մարդ, նրանցից շաքարախտից մահացածների թիվը 1276-ն է, որը նախորդի համեմատ ավելացել է 85-ով:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով` 2015-ին արյան շրջանառության համակարգի հիվանդությունների պատճառով մահացության ամենաբարձր ցուցանիշը թեւ

նախորդ տարվա համեմատ նվազել է, սակայն այն դեռեւս պատճառ է դարձել 12 հազար 817 մարդու մահվան: Մահացության պատճառների շարքում երկրորդ ամենաբարձր ցուցանիշն ունեն չա-

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 3.12.2016. Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալներ

Քրիստոսի 12 առաքյալներից երկուսը՝ Սբ. Թադեոսը եւ Սբ. Բարդուղիմեոսը, քարոզեցին եւ քրիստոնեությունը տարածեցին Հայաստան աշխարհում, ուր եւ նահատակվեցին Սանատրուկ բազմավորի հրամանով:

Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների այս քարոզչությունների եւ նահատակությունների համար էլ Հայ եկեղեցին համարվում է Առաքելական եւ կոչվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցի:


6.12.2016. Սուրբ Արզաք Նախավայի եւ Քրիստոսին հավատացող մեր անդրանիկ բազմավորի հիշատակության օր

9.12.2016. Հղություն Սուրբ Աստվածածնի

10.12.2016. Սուրբ Նիկողայոս Չմյուռնացի Արքանշեպարծնի

ՊԵՏՐՈՍԱՆՈՒՄ

ՎՐԱՅԱԿԱՆ ԳԻՐԸ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ



ԿԻՆՈՒՐՎԵՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ «ՓՎԿՈՒՂԻ» ՖԻԼՄԸ՝ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԿԻՆՓՈՒԱՏՈՆՈՒՄ

Թբիլիսիի միջազգային կինոփառատոնը մեկնարկել է նոյեմբերի 28-ին եւ կշարունակվի մինչեւ դեկտեմբերի 4-ը:

Փառատոնը հիմնադրվել է 2000 թվականին. նպատակն է վրաց հանդիսատեսին ներկայացնել համաշխարհային եւ վրաց կինոնկարագրաֆիայի նոր, բարձրորակ գեղարվեստական արժեք ունեցող գործեր, համաշխարհային կինոյի նոր միտումներ եւ նպաստել վրաց կինոարտադրության զարգացմանը: Միջոցառմանը Հայաստանը ներկայացավ «Ոսկե ծիրան» կինոփառատոնի հիմ-

նադիր տնօրեն, ՀՀ ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր, ծնունդով ախալքալքացի Հարություն Խաչատրյանի «Փակուղի» ֆիլմով: Այն ցուցադրվեց դեկտեմբերի 1-ին, մայրաքաղաքի «Ամիրանի» կինոթատրոնում: Կինոյի անդրանիկ պրեմիերան կայացել է ընթացիկ տարվա ապրիլի 19-ին Շվեյցարիայի Նոյն քաղաքում «Vision du Peel» միջազգային կինոփառատոնի շրջանակ-

ներում: Ֆիլմի ասիական պրեմիերան ներկայացվել է ապրիլի 24-ին Իրանի «Ֆաջա» ֆիլմերի միջազգային փառատոնին, իսկ հայաստանյանը՝ ապրիլի 29-ին, Երեւանի «Մուսկվա» կինոթատրոնում:

«Փակուղի» վավերագրական կինոնկարը Լեւոն Ավետիսյան անունով ինժեների մասին է, ով 1990-ականներին Գրին քարտ շահեց եւ ընտանիքով տեղափոխվեց Ամերիկա: Հարություն Խաչատրյանը շուրջ 25 տարի հետեւել է իր հերոսին եւ մեկ ֆիլմում ներկայացնում է նրա կյան-

քի ու ընտանիքի հետ հարաբերության տարբեր հանգամանքները:

«Փակուղին» Հ.Խաչատրյանի «Անվերջ փախուստ, հավերժ վերադարձ» շարքի երկրորդ գործն է, որի սցենարի հեղինակներն են Հարություն Խաչատրյանն ու Միքայել Ստամբոլցյանը, օպերատոր՝ Գեորգ Սարգսյան, հնչյունային ձեւավորող՝ Միքայել Ստամբոլցյան, հնչյունային օպերատոր՝ Հայկ Իսրայելյան: Մոնտաժը՝ Հարություն Խաչատրյանի եւ Տիգրան Բաղինյանի:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՇԱԽՄԱՏ

ՄԱԳՆՈՒՄ ԿԱՐԼՍԵՆԸ ՊԱՇՏՊԱՆՆԵՑ ԱՆԽԱՐՀԻ ԳԵՄՊԻՈՆՆԻ ԿՈՉՈՒՄԸ



Շախմատի աշխարհի չեմպիոնի կոչման համար մրցախաղում հաղթեց 26-ամյա Մագնուս Կարլսենը՝ պահպանելով տիտղոսը:

Նյու Յորքում ընթացող Մագնուս Կարլսեն-Սերգեյ Կարյակին չեմպիոնական

մրցախաղի հիմնական պարտիաներն ավարտվել էին ոչ-ոքի՝ 6:6, եւ չեմպիոնին որոշելու համար ուժերը չափեցին թայ-բրեյքում: Առաջին երկու պարտիաները համառ ու աննկարագրելի լարված անցան եւ ավարտվեցին խաղաղ ելքով, սակայն 3-րդ եւ 4-րդ պարտիաներում նորվեգացին նախ՝ սեւ խաղաքարերով, այնուհետ՝ սպիտակ խաղաքարերով կարողացավ հաղթել ռուս Սերգեյ Կարյակինին:

ՆՈՆԱ ՎԱԹՐԻՆԿԱՎԻԼԻՆ ԵՎ ԳԻՐԳԻ ԲԱՐԱԹՈՒՐՈՎԸ ԱՆԽԱՐՀԻ ԳԵՄՊԻՈՆՆԵՐ՝ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄՐՅԱՆԱՐՈՒՄ




Չեխիայում անցկացվեց վետերան շախմատիստների աշխարհի առաջնության մրցաշարը: Կանանց, 65-ն անց շախմատիստների մրցաշարում՝ 9 հնարավորից հավաքեց 8 միավոր, չեմպիոնի կոչումը նվաճեց աշխարհի հնգակի չեմպիոն Նոնա Գափրիդաշվիլին:

50-ն անց տղամարդ շախմատիստների մրցաշարում՝ 11 հնարավորից 9 միավորով չեմպիոնի կոչումը նվաճեց թբիլիսահայ Գիրգի Բաղաթուրովը: Նա եղել է Վրաստանի չեմպիոն, երկրի հավաքականի անդամ, մասնակցել է շախմատի թիմային օլիմպիադային:

ՎԱՄՃԱՆՎԵԼ Է ԱՎԻԱԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ ԻՎԱՆ ՄԻԿՈՅԱՆԸ

Կյանքի 90-րդ տարում Մոսկվայում մահացել է ավիակոնստրուկտոր Իվան (Վանո) Միկոյանը: Նա խորհրդային ճանաչված քաղաքական ու կուսակցական գործիչ Անաստաս Միկոյանի հինգ որդիներից մեկն էր: Նշենք, որ 1943 թվականին Հոլիվուդում Միկոյանը «հակախորհրդային պատանեկան կազմակերպության» մասնակցելու համար ձերբակալվել էր ու արտաքսվել Ստալինաբադ (Դուշանբե), որտեղ էլ ավարտեց ավիացիոն-տեխնիկական ուսումնարանը: Ապա սովորել է ժուկովսկու անվան ակադեմիայում:



Հոլիվուդում Միկոյանն իր ողջ կյանքում աշխատել է կոնստրուկտորական այն բյուրոյում, որը 1939 թվականին հիմնել էր նրա հորեղբայրը՝ Արտեմ Միկոյանը: Նա ՄիԳ-29 բազմանպատակային կործանիչի մշակողներից մեկն է: ՄիԳ-29-ի մշակման համար Միկոյանը երկու անգամ արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի: Կոնստրուկտորը մինչեւ կյանքի վերջը մնում էր «ՄիԳ» ռուսական ինքնաթիռաշինական կորպորացիայի խորհրդակցանք:

Table with 10 columns and 10 rows, containing numbers 1 through 61, likely a calendar or grid.

Large advertisement for 'VRASTAN' (ՎՐԱՍՏԱՆ) featuring a grid of numbers and text in Armenian. The text includes contact information and details about the company's services in Tbilisi, Georgia.

Footer section with contact information for 'VRASTAN' (ՎՐԱՍՏԱՆ) in Tbilisi, Georgia. It includes phone numbers, website, email, and address details.